

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն - 5

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Ա. Մարկոսյանը, Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը, Գ. Արշակյանը, Ա. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Գ. Թադևոսյանը, Բ. Հարությունյանը, Ա. Հունանյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ն. Անդրեասյանը, Ս. Բադալյանը, Բ. Վարդանյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահագիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալներ Վ. Սաֆարյանը, Ա. Ներսիսյանը, աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի վարչական տարածքում 2022 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:

/Ձեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին:

/Ձեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Անտառուտ բնակավայրի վարչական ղեկավարի լիազորությունները Բյուրական բնակավայրի վարչական ղեկավարին վերապահելու մասին:

/Ձեկուցող՝ Ս. Սահակյան/

25 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի վարչական տարածքում 2022 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի վարչական տարածքում 2022 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

Զեկուցողը մասնավորապես նշեց, որ 2022 թվականի համար Աշտարակ համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին ավագանու որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-14-րդ և 16-րդ հոդվածների պահանջների հիման վրա: Միաժամանակ Շանթ Վահանյանը հայտնեց, որ Աշտարակ համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու համար հիմք են ընդունվում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով սահմանված դրույքաչափերը, ինչպես նաև Աշտարակ խոշորացված համայնքի առանձնահատկությունները՝ ելնելով դրանից տեղական տուրքերը և վճարները սահմանվել են՝ տարանջատելով քաղաքային և գյուղական բնակավայրերի:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և Շանթ Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

22 - ԿՈՂՄ, 3 - ԴԵՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեն: Շանթ Վահանյանը նշեց, որ Աշտարակ համայնքի 2022 թվականի բյուջեի հաստատման որոշման նախագիծը մշակվել է հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի պահանջներին

համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են արդյունավետությունը և հստակությունը: Համայնքի բյուջեի պլանավորումն իրականացվել է համեմատական մեթոդով, որի ժամանակ հիմնվել ենք արդեն իսկ խոշորացված համայնքների վերջին տարիների բյուջեների վերլուծության վրա: Բյուջեն պլանավորված է նպաստելու համար համայնքի համաչափ և կայուն զարգացմանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և Շանթ Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ, 6 - ԴԵՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - *Անտառույր բնակավայրի վարչական ղեկավարի լիազորությունները Բյուրական բնակավայրի վարչական ղեկավարին վերապահելու մասին*

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.2-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Անտառույր բնակավայրի վարչական ղեկավարի լիազորություններից բխող գործառույթների իրականացումը վերապահել Բյուրական բնակավայրի վարչական ղեկավարին:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի և Սամվել Սահակյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

24 - ԿՈՂՄ, 1 - ՁԵՌՆՊԱՀ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2022 թվականի հունվարի 21-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ

- ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ _____
- ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ _____
- ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ _____
- ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ _____
- ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ _____
- ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ _____
- ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ _____
- ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ _____
- ԳԱԼՈՒՍՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ _____
- ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
- ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ _____
- ՆԱԶԵԼԻ ԱՐՄԵՆՅԱՆ _____
- ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____
- ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ _____
- ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ _____
- ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____
- ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____
- ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ _____
- ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ _____
- ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ _____
- ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ _____
- ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ _____
- ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ